# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

18 մարտի 2026թ. թիվ 270

## Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԵՎ Լ.ՀԱԽԻՆՅԱՆԻՆ ՋՐԱՇԵՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանի 2026 թվականի մարտի 18-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետներ Վահրամ Դանիելյանին և Լևոն Հախինյանին ս/թ մարտի 18-ին մեկ օրով գործուղել Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայր՝ 2023-2025թթ. հիմնանորոգված ճանապարհների ուսումնասիրության համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետներ Վահրամ Դանիելյանին և Լևոն Հախինյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

3/18/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. մարտի 18
ք.Վանաձոր